

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

04.10.2021թ

ք.Երևան

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ Ծառայություն) Երևան քաղաքի Կենտրոն, Նորք-Մարաշ և Էրեբունի-Նուբարաշեն վարչական շրջանների բաժնի պետ, արդարադատության գնդապետ Միեր Խուրշուդյանսու ուսումնասիրելով հարուցված թիվ 02663887 կատարողական վարույթի նյութերը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

**ՀՀ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից «07» օգոստոս 2017թ. տրված թիվ ԵԿԴ/4241/02/16 կատարողական թերթի համաձայն պետք է Հակոբ Վաղինակի Բաղայանից հօգուտ Ակբա-Կրեդիտ Ազրիկոլ բանկի ՓԲԸ-ի բռնագանձել 4566231 ՀՀ դրամ, նաև տույժեր և տոկոսներ:**

Դատական ակտի հիման վրա Ծառայության Երևան քաղաքի Կենտրոն, Նորք-Մարաշ և Էրեբունի-Նուբարաշեն վարչական շրջանների բաժնում հարուցված թիվ 02663887 կատարողական վարույթի շրջանակներում նույն բաժնի ավագ հարկադիր կատարող, արդարադատության կապիտան՝ Հ. Առուստամովի կողմից 25.08.2021թ կայացվել «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշում:

Ուսումնասիրելով վերոնշյալ որոշումը պարզվել է, որ ավագ հարկադիր կատարող, արդարադատության կապիտան Հ. Առուստամովի 25.08.2021թ. կայացված «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշման մեջ աճուրդի սկիզբ է սահմանվել՝ 13.11.2021թ.:

Նկատի ունենալով որ՝ կատարվել է տպագարական սխալ, ուստի անհրաժեշտ է ավագ հարկադիր կատարող արդարադատության կապիտան Հ. Առուստամովի կողմից 25.08.2021թ. կայացված «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշման մեջ աճուրդի սկիզբ է սահմանել՝ 15.11.2021թ., իսկ մնացած մասը թողնել անփոփոխ:



Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ, 28.1-րդ հոդվածներով և 28-րդ հոդվածի 6-րդ մասով

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի**

Փոփոխել՝ ավագ հարկադիր կատարող, արդարադատության կապիտան Հ. Առուստամովի 25.08.2021թ. «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» կայացված որոշման մեջ սահմանված աճուրդի սկիզբի ամիս ամսաթիվը և կարգալ՝ 15.11.2021թ., իսկ մնացած մասը թողնել անփոփոխ:

**Որոշման պատճեն ուղարկել կողմերին:**


Հարկադիր կատարողի որոշումը կարող է բողոքարկվել վերադատության կարգով որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում, կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները:

Բաժնի պետ,

Արդարադատության,

գնդապետ



Մ.Խուրշուդյան



ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆ, ՆՈՐ ՄԱՐԱՇ ԵՎ ԷՐԵՐՈՒՆԻ-ՆՈՒԲԱՐԱՇԵՆ  
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ

Թիվ Նա 5991/02

Երևան, Հալաբյան 41ա

04/10/2021թ

հեռ./060/713-467 (00248)

 Հակոբ Բաղայան

/ք. Երևան, Խորենացու փ. 2 շենք 7բն/

<<ԱԿԲԱ բանկ>> ԲԲԸ

/ք. Երևան, Արամի 82-84/

Ուղարկվում է Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Կենտրոն, Նոր Մարաշ և Էրեբունի-Նուբարաշեն վարչական շրջանների բաժնի պետի կողմից 04.10.2021թ կայացված «Հարկադիր կատարողի որոշումը փոփոխելու մասին» որոշումը:

Առդիր՝ որոշումը «2» թերթից:

**Հարգանքով՝**

Բաժնի պետ,

Արդարադատության գնդապետ

Մ.Խուրշուդյան

Կարարող՝ նույն բաժնի ավագ  
հարկադիր կարարող,  
արդարադատության կապիտան Հ.Առուստամով  
հեռ./060/713-468/00313/